— Ադա, էսենց էլ բա՛ն... Հիմա որ մը-տածում եմ՝ հաւատաք չի գալիս... Երազ էր, երազ չէր, ինչ իմանամ... Մի տէրտէր, որ ձիւն ու բուքի մէջ ման ա գալիս, զուլի նման թեւեր է առնում թռչում ա... Ինչպէս էլի, ինչպէս նաղլումը պատմում են: Աչքերս քեռանաց եթէ սուտ եմ ասում...

— Եկ ասենք, Աւանես ջան, մի քիչ կոնծել էիր...

— Ցիսո՛ւս Քրիստոս, ասում եմ, աղբեր, ասում եմ իսկի արաղի երեսը չէի տեսել: Բերանս չորանա՝ եթէ ըզորդ չեմ ասում...

Եւ քրսինի շուրջը նստած գիւղացիների թերահաւատ աչքերում կայծեր են վառւում: Նրանց սիրտը սեղմւում է: Մտահոգ նայում են դռան, չլինի թէ մէկ էլ բացուի եւ առասպելական քահանան ձիւնով ծածկուած յանկարծ ներս մտնի:

Գիշերը, երբ Սուրբ Ղազարի բոլոր լոյսերը մարւում են եւ նոճիները, բարձր ուրուականների նման, ցցւում են միայնակ. երբ վանականները կողպում են իրենց դռները եւ մտնում անկողին. երբ Հայր Արսէն Ղազիկեանը վերջապէս փակում է իր տետրակները եւ քթի տակ մի չարական մրմռալով որոշում է քնել՝ եթէ Լիզօի կողմից ուշադրութեամբ դիտէք, պիտի նշմարէք, որ դրադարանի այն մասի պատուհանը, ուր պահուած են ձեռագիրները, վայրկեանապէս բոցավառւում է եւ անմիջապէս մարւում:

Շատերը այդ դիտել են: Առհասարակ կարծում են, որ վանքի պահապանն է որ շրջում է լամպարը ձեռքին եւ անցնում է սենեակից սենեակ:

Ճշմարտութիւնը ուրիշ է:

Հայր Ղեւոնդ Ալիշանը վերադառնում է գիշերուան ժամը 13-ին: Բաց է անում ձեռագիրների սենեակի պատուհանը եւ ներս մըտնում: Բոլոր վանականները միաձայն վկայում են որ այդ ժամին մի ինչ որ անսովոր ձայն է լսւում: Ծերունիները, որ շատ թեթեւ քուն ունին, իրենց գլուխը վեր են բարձրացնում եւ մի ակնթարթ փոխում. երիտասարդները անհանդիստ շարժւում են անկողնի մէջ, ջղայնօրէն բռունցքը սեղմում իրենց կրծքին եւ դառնում:

Ցեռոյ ամէն ինչ նորից թաղւում է լռութեան մէջ:

Իսկ այնտեղ, սենեակում, գրականները բացւում են, ձեռագիրների էջերը շարժւում են մեռած տերեւների նման եւ մանրանկարները դուրս են գալիս մէկը միւսի ետեւից:

Ոսկի կորած դաշտեր: Եռանկիւնի աստղեր: Զուգանման մարմիններով էակներ: Անկարելի թռչուններ: Լայն քղամիդներով ծածկուած սուրբեր եւ սրբուհիներ: Զինուորականներ: Կէս ծռուած դղեակների մօտ նըստած թագաւորներ: Բաց լաստ մի երկինք իրրեւ ներքնախոր եւ վառվռուն այլաձեւ ծաղիկներ:

Փոքրիկ այդ սենեակում, հայ ժողովուրդի պատմութիւնը, տարօրինակ տեսարաններ է պարզում: Թագաւորները, սպարապետները, սուրբերը, կանայք եւ ժողովուրդ, դուրս են ցցւում դարերի միջից, բաղուկները երկարում, գլուխները դուրս հանում, ֆոսֆորէ աչքերով նայում դողահար եւ սպրտնած Հայր Ալիշանին եւ սպասում նրա պատմութեան:

Ի՞նչ է պատմում ծերունին, յայտնի չէ:

Նրա շրթունքները շարժւում են, աչքերը կայծկլտում եւ երբեմն էլ դեղնած այտի վրայից մեծ մի արցունք է վազում:

Լսում են: Մէկ էլ խուլ մի հառաչանք է լսւում: Կանանց խումբը երկարօրէն մղկտում է: Մի սուրբ, գլուխը ձեռքերի մէջ բռնած, հեծկլտում է:

Ծածկուած այդ ձայները փչբուած ալիքի նման տարածւում են մեծ դահլիճում, սանդուխների վրայից վար թափւում, տարածւում միջանցներում եւ բախւում խուցերի հաստ դռներին:

«Ծովը այս գիշեր անհանգիստ է», մտածում են վանականները եւ իրենց գլուխը սեղմում են բարձին:

Ժամը 4-ի մօտերը ամէն ինչ լռում է:

Երբ վանքի զանգակը սկսում է զողանջել եւ եկեղեցում շարականը ձեռքերը կպցնում է պատերին՝ Հայր Ղեւոնդ Ալիշանը նորից շրջում է դռան առջեւ եւ ճակատը պաղ մարմարին տուած խօսում է ոգիներին:

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան